Այժմ հասկանալի էր ինձ մղդսու ցանկութիւնը. նա կամենում էր շահոել իր «խեղճիցէ, որպէս իրան պատկանող սեփականութիւնից, եւ չէր ուզում վարձել վարդապետներից իր համար անօգտաւէտ պայմաններով: Թողեալ այդ, ես մղդսի Թորոսի խօսքերի մէջ նկատում էի ոչ միայն բողոք դէպի վանական աբեղաների հարստահարութիւնը այլ մի դառն ատելութիւն դէպի նրանց սրբազան անձնաւորութիւնը, որը չպետք է լինէր առանց իրական պատճառների:

— Երեւում է, վարդապետները քեզ հետ այնքան լաւ չե՞ն, մղդսի Թորոս:

— Վարդապետնե՛ր... — կրկնեց նա խորհրդական ձայնով: — Ի՞նչ կ'ասես, եղբայր, դրանք մարդիկ չեն, իստակ սեւ սատանաներ են... Դրանք այն մղդսուն հաց կը տան, որ նրանց ամէն ասածին պատասխանէ՝ «հա»՛: Բայց մղդսի Թորոսը մէկ դրուստ մարդ է, նա չէ կարող վատ բանին «հա՛» ասել...

Առհասարակ ես նկատում էի, որ մարդիկ այն ժամանակ միայն ջերմեռանդ են դէպի վանքերը եւ վանական աբեղաները, երբ նրանցից հեռու են: Որի ընդհակառակն, ես տեսնում էի, ոոյ վանքերին մերձաւոր ժողովուրդը չափազանց զզուած էր նրանցից: Ի՞նչ էր դրա պատճառը, ես չգիտէի. միայն երեւում էր նրանց մէջ մինչեւ անգամ թերահաւատութիւն այն սրբազան տեղերի մասին, որոնք նոիրական էին ամէն մի հայի համար: Շատ անգամ մի գործարանի կառավարչի վատութեանը ծնուցանում է յաճախորդների մէջ ատելութիւն դէպի նոյնիսկ գործարանի հիմնարկութիւնը: Արդեօք այս օրինակը չէ՞ր վերաբերում եւ մեր աբեղաներին եւ մեր վանքերին:

Ես երեխայութիւնից ունէի փոքրիկ խորամտնկութիւն, սատանայի պէս մտնել մարդու դամարում, եւ որպէս ասում են, նրա ուղեղը թափ տալ: Լսելով մղդսի Թորոսի վերջին խօսքերը, թէ վարդապետները այն ժամանակ միայն վարձատրում են վանքի սպասաւորներին, երբ նրանց կամքին հլու ծառաներ են դառնում, որոնք նրանց իւրաքանչիւր խօսքին, որքան եւ վատ լինէր նա, կը պատասխանեն՝ «այո՛», — ես սկսեցի աւելի հետաքրքիր լինել, թէ ի՞նչ էր պատճառ աւել մղդսու դժգոհութեանը: Նա թէեւ խիստ դժոարութեամբ, այսոամենայնիւ պատմեց.

— Մենք երկու եղբայրներ էինք. իմ պստիկ եղբայրը պսակոեց, մի ամիս չանցաւ, մեռաւ: Նրա հարսը մնաց տանը այրի: Մէկ օր մեր Կարապետ հայր սուրբն ինձ կանչեց իր մօտ, ասաց՝ «մղդսի Թորոս, քո եղբօր կնիկը ի՞նչ կանէ տանը»: Ես պատասխանեցի, — հայր սուրբ, ծառայ եմ աջիդ, ի՞նչ պէտք է անէ, իմ երեխեքին շորեր կը կարէ, կը կարկտէ, թոնիր կվառէ, հա՛, այդպէս տան բաներ կանէ: Իմ կնիկը հիւանդ է, իմ երեխեքը նա կպահէ: Վարդապետն ասաց. «այդ բաներից քեզ ի՞նչ խէր, դու քո եղբօր կնիկն ուղարկիր,